ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԳՅՈՒՂ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ - 2012 ԹՎԱԿԱՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ

1.3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1.6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.7. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1.8. ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ

1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.11. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ

1.12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1.13. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1.14.ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

1.15.ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

1.16.ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1.17.ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.18.ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

2.2.ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒ

3.1.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի 2016-2020 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվելէ՝հիմքընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքով սահմանված՝տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպությանկողմից մշակված և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2014 թվականին հավանության արժանացած «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» և նույն կազմակերպության կողմից 2016 թվականին մշակված «Բազմաբնակավայր համայնքում «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» կիրառման» ուղեցույցի[1] մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

ՆերկայացվողՀԶՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Ղարիբջանյան համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է ՀԶՀԾ-ի մշակմանը մասնակից համայնքի բնակավայրերի աշխատանքային խմբերի (այսուհետ՝ԲԱԽ-երի) կողմից կատարված աշխատանքով և առաջարկներով, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ:ՀԶՀԾ-ն մշակվել է մասնակցայինեղանակով՝ հաշվի առնելով համայնքի շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունները: Հարցումներիմիջոցով վեր են հանվել համայնքիբնակիչներին հուզող խնդիրները, դրանք գնահատվելեն բնակավայրային ժողովների ժամանակ ԲԱԽ-երի կողմից և դասակարգվել ըստ առաջնահերթության:Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքիպահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և համայնքի ղեկավարին կից գործող տարեկան բյուջեի ու ՀԶՀԾ-ի մշակման խորհրդակցական մարմնի(ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2016-2020թթ. ՀԶՀԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմինը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ

[1] Ուղեցույցը մշակվել է ԳՄՀԸ-ի ֆինանսավորմամբ ՀՖՄ-ի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում

լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

*ՀԶԶԾ-ի 1-ին բաժնում* ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը: Բաժնում ներառվել է նաև համայնք ՈՒԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

*ՀԶԶԾ-ի 2-րդ բաժնում* սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, թե ինչպիսին ենք ցանկանում տեսնել մեր համայնքը ապագայում, ռազմավարությունը և ՀԶԶԾ-ի հիմնական նպատակները:

*ՀԶԶԾ-ի 3-րդ բաժնում* ներկայացվում են պետության և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համայնքում գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող (շարունակվող) համագործակցության ուղղությունները:

*ՀԶԶԾ-ի 4-րդ բաժնում* ներկայացվում են համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային ցուցանիշները:

*ՀԶԶԾ-ի 5-րդ բաժնում* ներկայացված են համայնքի զարգացման ծրագրերը: Դրանք գնահատվել են ըստ սահմանված չափորոշիչների և սահմանվել են առաջնահերթություններ: Ամփոփ ձևով ներկայացվել են առաջնահերթ այն ծրագրերը, որոնք մոտավոր հաշվարկներով ակնկալվում է, որ հնարավոր կլինի իրականացնել կանխատեսվող ֆինանսական միջոցներով: Գալիք հինգ տարիների ընթացքում իրականացման ենթակա ծրագրերը ձևակերպվել են օգտագործելով ծրագրերի կազմման օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք հինգ տարիների:

*ՀԶԶԾ-ի 6-րդբաժնում* ներկայացվում է համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի կառավարման (օտարման, վարձակալության տրամադրման)հնգամյա ծրագիրը:

*ՀԶԶԾ-ի 7-րդբաժնում*ներկայացվումէՀԶԶԾ-ի իրականացումը, մշտադիտարկումը (մոնիթորինգը) և գնահատումը, վերահսկումը և վերանայումը:

*ՀԶԶԾ-ի եզրափակում բաժնում* ներկայացվում են համառոտ մոտեցումներ՝ ՀԶԶԾ-իիրականացման, վերահսկման և գնահատման, ծրագրերի իրականացման արդյունքների բնութագրման, ՀԶԶԾ-ում փոփոխություններին (կամ) լրացումների կատարման գործընթացների վերաբերյալ:

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## *1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ*

Ղարիբջանյան գյուղը հիմնադրվել է 1873թվականին Ղարաքիլիսա անվամբ: Գյուղը գտնվում է Գյումրի քաղաքից 4կմ հեռավորության վրա,դեպի հարավ,Ախուրյան գետի ձախ ափին,ծովի մակերևույթից 1600մ բարձրության վրա: 1877թ. գյուղը վերանվանվում է Ալեքսանդրովկա: Ի պատիվ Նիկոլայ 3-րդ ցարի կնոջ, 1878թ. գյուղում կառուցվում է ռուսական եկեղեցի:

1926թվականի երկրաշարժից հետո գյուղը ամբողջովին վերակառուցվեց պետության կողմից:

1928թվականին գյուղում ստեղծվեց <<Կոմունա>> թաղամասը, որը բաղկացած է եղել 30 ընտանիքից: Կոմունան հարատևեց մինչև 1935թվականը:

1930թվականին գյուղը կոլեկտիվացվեց, կառուցվեց Կոմունայի հանրակացարան և օժանդակ տնտեսության շենքեր:

1932թվականին վարկի միջոցով կառուցվեց առանձնատներ:

1933թվականին գյուղը վերանվանվում է Բագրատ Ղարիբջանյանի անունով:

Գյուղի բնակիչները զբաղվում են բանջարաբուծությամբ, հացահատիկային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ:

## *1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

Ղարիբջանյան համայնքի բնակիչները ավանդապաշտ և ավանդապահ են՝ միաժամանակ անտարբեր չլինելով նորի նկատմամբ: Պատմության մեջ կան փաստեր, որոնք վկայում են Ղարիբջանյանի բնակչության ըմբոստ բնավորության մասին: Ավանդաբար պահպանվել են նվիրվածությունը և հարգանքը ընտանիքի նկատմամբ, հարգանքն աշխատանքի և աշխատող մարդու նկատմամբ: Խոհանոցում պահպանվել են ավանդական ճաշատեսակներ, որոնցով շարունակում են պատվել և զարմացնել հյուրերին:

Ղարիբջանյան համայնքի բնակչությունը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1133 մարդ (աղյուսակ 1):

Աղյուսակ1.

Համայնքիկազմիմեջմտնողբնակավայրերիբնակչությանուտնայինտնտեսություններիցուցանիշները

(01.01.2016 թ. դրությամբ)

| Հ/հ | Բնակավայրի անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը | Մշտական տնայինտնտեսություններ ի թվաքանակը | Առկա տնայինտնտեսություններ ի թվաքանակը |
|---|---|---|---|---|
| 1. | Ղարիբջանյան | 1005 մարդ | 264 տ/տ. | 276 տ/տ. |

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ (մարդ)

*(Տվյալները լրացված են 2013 թ. հունվարի 1-ի դրությամբ)*

- Ընդամենը՝ մշտական բնակչություն - 1056,
  Այդ թվում՝ տղամարդ - 529, կին՝ - 527,
- Տնային տնտեսությունների թվաքանակը – 296,
- Առկա բնակչություն – 1134,
- Առկա տնային տնտեսությունների քանակը – 220,

*Բնակչության բաշխվածությունն ըստ ազգային պատկանելության (առկա բնակչություն)*

- Հայ – 1132,
- Ռուս – 2,

*Բնակչության բաշխումն ըստ տարիքային խմբերի (առկա բնակչություն)*

Նախադպրոցական տարիքի երեխաներ / 0 – 6 տարեկան / - 101,

որից՝ մինչև 1 տարեկան – 15,

1-2 տարեկան – 28,

3-4 տարեկան – 23,

5-6 տարեկան – 35:

- Դպրոցական տարիքի երեխաներ / 7 – 17տարեկան / - 137,

  որից՝ 7-10 տարեկան – 53,

  11-14 տարեկան – 38,

  15-17 տարեկան – 46:

- Հասուն տարիքի բնակչություն / 18-64 / - 799,

  որից՝ 18-22 տարեկան – 64,

  23-45 տարեկան – 424,

46-64 տարեկան – 311:

- Տարեց բնակչություն / 65 և ավելի / - 97:
- Համայնքի ընտրողների թիվը - 712:

*Ծնունդ, մահ, ամուսնություն, ամուսնալուծություն (վերջին 3 տարիների միջին ցուցանիշ)*

- Ծնունդ - 15,

  Որից կենդանի ծնունդ – 15,
- Մահ – 3,
- Ամուսնություն – 12,
- Ամուսնալուծություն – 2:

*Համայնքի սոցիալական խմբերի ներկայացվածությունը*

- Հաշմանդամներ – 37,

  այդ թվում կանայք՝ 12,

  որից՝ հաշմանդամ երեխա – 2,
- Միակողմանի ծնողազուրկ երեխա - 2,
- Ամուսնալուծված անձի երեխա – 6,
- Կենսաթոշակառուներ – 104,
- Միայնակ չաշխատող կենսաթոշակառուներ – 12,
- Տարեց կենսաթոշակառուներ /75 տարեկան և բարձր/ - 35,

*Համայնքի տնային տնտեսությունների սոցիալական խմբերի ներկայացվածությունը*

- Երեք և ավելի երեխաներ ունեցող /0-16 տարեկան/ – 31,
- Միայն կենսաթոշակառուներից կազմված /65 և ավելի տարեկան/ - 2,
- Հաշմանդամ երեխա ունեցող – 2,
- Մինչև 6 տարեկան երեխա ունեցող – 58
- Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը՝ 28

*ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ*

*Համայնքի բնակչության բաշխումն ըստ զբաղվածության հիմնական ճյուղերի (մարդ)*

- Գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 390
- Վարձու աշխատանք գյուղատնտեսական ոլորտում – 35,

- Վարձու աշխատանք ոչ գյուղատնտեսական ոլորտում,մասնավոր – 34,
- Վարձու աշխատանք պետական ոլորտում – 38,
- Ոչ գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 1,
- Աշակերտներ /16 տարեկան և բարձր/ - 98,
- Ուսանողներ – 23,
- Բանակում ծառայողներ – 19,

  որից պայմանագրային՝ 9,

  պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող՝ 10,
- Չունեն զբաղվածություն /տնտեսապես ոչ ակտիվ/ – 234,

*Համայնքում զբաղվածների բաշխվածությունն ըստ ոլորտների*

- Գյուղատնտեսություն – 511,
- Հանքագործական արդյունաբերություն – 0,
- Էլեկտրոէներգիայի, գազի ջրամատակարարման ոլորտի սպասարկում – 7,
- Շինարարություն – 5,
- Առևտուր և այլ սպասարկումներ –1,
- Գյուղատնտեսական ծառայություններ – 35,
- Տրանսպորտ և կապ – 1,
- Տեղական ինքնակառավարում – 10,
- Կրթություն – 27,
- Առողջապահություն և սոցիալական ծառայություններ –1,
- Կոմունալ, անհատական ծառայությունների մատուցում – 0,
- Ուսանողներ, ավարտական դասարանների աշակերտներ, բանակում ծառայողներ - 80:

*Միգրացիա /2012 թվականի ընթացքում/*

- Այլ բնակավայր տեղափոխված ընտանիքների թիվը – 1,

  որից՝ Հայաստանում այլ բնակավայր՝ 1:
- Արտերկիր՝ 0:
- Մշտական բնակության համար համայնք տեղափոխված ընտանիքների թիվը՝ 0,
- որից Հայաստանի այլ բնակավայրերից՝ 0:
- Արտագնա աշխատանքի մեկնողների թիվ – 62 (60տնային տնտեսություններից):

*Համայնքի հասուն տարիքի բնակչության բաշխումն ըստ կրթամակարդակի*

- Տարրական – 50,
- հիմնական – 140,
- միջնակարգ -577,
- միջնակարգ մասնագիտական – 113,
- բարձրագույն - 47:

## 1.4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ժողովրդի իշխանությունն իրականացնելու և հանայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրված են համայնքի ավագանի /ավագանու 5 անդամ/ և համայնքի ղեկավար: 2012 թ. Սեպտեմբերի 9-ին համայնքում կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքներով համայնքի ղեկավար վերընտրվել Մանվել Պողոսյանը:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Համայնքային ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն ձևավորվել է համայնքի ղեկավար աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

*Հայեցողական պաշտոն*

Համայնքի ղեկավարի տեղակալ:

*Համայնքային ծառայության պաշտոններ՝*

1. Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար – 1 միավոր,
2. գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ – 1 միավոր,
3. գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ – միավոր:

*Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ*

1. Համակարգչի օպերատոր – 1 միավոր,
2. Գրադարանավար – 1 միվոր,
3. Հավաքարար - 1 միավոր,
4. Ծառայողական ավտոմեքենայի վարորդ – 1 միավոր:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ

Աղյուսակ 2. Ղարիբջանյան համայնքի աշխատակազմը

| Հ/հ | Պաշտոնիանվանումը (համայնքայինծառայությանպաշտոններիմասովն ա՛ծածկագիրը) | Հաստիքների քանակը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|
| ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | |
| 1. | Համայնքի ղեկավար | 1 | 1 | 250000 |
| 2. | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 1 | 150000 |
| 3. | | | | |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | |
| 4. | Աշխատակազմի քարտուղար (1.2-1) | 1 | 1 | 177000 |
| 5. | Առաջատար մասնագետ-հաշվապահ (3.1-1) | 1 | 1 | 175000 |
| 6. | 1-ին կարգի մասնագետ (3.2-1) | 1 | 1 | 175000 |
| 7. | Համակարգչային օպերատոր | 1 | 1 | 95000 |
| 8. | Գրադարանավար | 1 | 1 | 95000 |
| 9. | Հավաքարար | 1 | 1 | 73000 |
| 10. | | 1 | 1 | 73000 |
| | *Ընդամենը* | 6 | | *1038000* |

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի և համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն համայնքում կազմավորվել և գործում են հետևյալ մշտական հանձնաժողովները՝

- Վարչական հարցերի հանձնաժողով,
- Անչափահասների հարցերի հանձնաժողով,
- Խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողով,
- Կանանց և երեխաների հարցերի հանձնաժողով,
- արտակարգ իրավիճակներից հետո ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողով,

## *1.5.ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 1997թ. մարտի 14-ի <<Համայնքների սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին>> թիվ 51 որոշմամբ:

Համայնքի սեփականություն հանդիսացող բոլոր շենքերն ու շինությունները կառուցվել են 1956-1988 թվականներին:

Համայնքի գույքը ֆիզիկական և բարոյական մեծ մաշվածություն ունի: Քայքայված և անբարեկարգ վիճակում է մանկապարտեզի, փոստի բաժանմունքի, , մշակույթի տան փոստի բաժանմունքի շենքերը, մարզադաշտը, որոնք կառուցման օրվանից մինչև օրս բիմնանորոգման չեն ենթարկվել:

Բնակավայրի խմելու ջրի ներտնտեսային համակարգը կառուցվել է 1979 թվականի: Այն ունի 4.5 կմ երկարություն: Ջրամատակարարումն իրականացվում է 8 լիտր/վրկ հզորության խորքային մեկ պոմպի և 240 ու 400 տոննա տարողության օրական կարգավորման ջրամբարների միջոցով: Ցանցի քայքայվածության պատճառով հաճախակի են ջրագծերի վթարները, ջրի կորուստներն ու աղտոտումները: Վերանորոգման կարիք ունի պոմպակայանն ու օրական կարգավորման ջրամբարները:

Համայնքի ոռոգման համակարգը կառուցվել է 1980-ական թվականներին և ունի 96.2 կմ ընդհանուր երկարություն: Այն նախատեսված է եղել 180հա վարելահողերի ոռոգման համար: Ցանցի քայքայվածության պատճառով դաշտերի ոռոգում չի իրականացվում և գործում է միայն գյուղամիջյան տնամերձ հողամասերի մոտ 45 հա ոռոգման ցանցը: Ցանցի վերանորոգման դեպքում կարող է ոռոգվել 180 հա վարելահող:

Բնակավայրի կոյուղու համակարգն ունի 3.5 կմ ընդհանու երկարություն, որը նույնպես գտնվում է քայքայված վիճակում և ունի վերանորոգման կարիք:

Անբարեկարգ և քայքայված վիճակում են նաև ինչպես մայրուղի բնակավայր 0.8 կմ, ճանապարհը, այնպես էլ շուրջ 8 կմ ընդհանուր երկարության ներհամայնքային ճանապարհները: Դաշտամիջյան ճանապարհների ընդհանու երկարությունը կազմում է 20 կմ, որի առանձին տեղամասերի քայքայվածության պատճառով այն գյուղատնտեսական տեխնիկայի համար դարձել է անանցանելի և լուրջ դժվարություններ է առեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ժամանակ: Համայնքի ուժերով և ներգրավված միջոցներով պարբերաբար կատարվել են բնակավայր մտնող և ներհամայանքային ճանապարհների փոսալցման աշխատանքներ, սակայն այն բավարար համարել չի կարելի:

Համեմատաբար բարվոք վիճակում է մշակույթի տան շենքում գյուղապետարանի կողմից օգտագործվող 3 աշխատասենյակները, որոնք 2010-11 թթ վերանորոգվել է համայնքի բյուջեի միջոցներով: Նորացման և համալրման կարիք ունի գյուղապետարանի և մշակույթի տան գույքը:

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ

| N | Գույքի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Միավորի արժեքը / դրամ/ | Հաշվեկշռա-յին ընդհանուր արժեքը /դրամ/ | Գույքի տեխնիկական վիճակի նկարագրությունը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Մշակույթի տան շենք | հատ | 1 | Գնահատ-ված չէ | 0.0 | Վերանորոգման կարիք ունի |
| 2. | | | | | | |
| 3. | | հատ | 1 | Գնահատ-ված չէ | | |
| 4. | Բնակելի շենք | հատ | 24 | Գնահատ-ված չէ | 0.0 | Վերանորոգման կարիք ունի |
| 5. | Մանկապարտեզի շենք | հատ | 1 | Գնահատ-ված չէ | 0.0 | Ենթակա է հիմնանորոգման |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6. | Խմելու ջրի օրական կարգավորման ջրամբար | հատ | 2 | Գնահատ-ված չէ | 0.0 | Ենթակա է վերանորոգմա |
| 7. | Ջրամատակարարման ներքի ցանց | կմ | 4.5 | Գնահատ-ված չէ | 0.0 | Ենթակա է վերանորոգմա |
| 8. | Խմելու ջրի խորքային հոր | հատ | 2 | Գնահատ-ված չէ | 0.0 | Օգտագործվում |
| 9. | Տրանսֆորմատորային ենթակայան | հատ | 1 | Գնահատ-ված չէ | 0.0 | Օգտագործվում |
| 10. | Ներհամայնքային կոյուղագիծ | կմ | 3.5 | Գնահատ-ված չէ | 0.0 | Ենթակա է նորոգման |
| 11. | Ոռոգման համակարգ | կմ | 92.6 | Գնահատ-ված չէ | 0.0 | ենթակա է հիմնանորոգմա |
| 12. | Ներհամայնքային ճանապարհներ | կմ | 8.0 | Գնահատ-ված չէ | 0.0 | Ենթակա է վերանորոգման |
| 13. | Դաշտամիջյան ճանապարհներ | կմ | 20.0 | Գնահատ-ված չէ | 0.0 | Ենթակա է վերանորոգման |
| 14. | Ներհամայնքային կամուրջ | հատ | 3 | Գնահատ-ված չէ | 0.0 | Առանձին հատվածներ ենթակա են փոսալցման |
| 15. | Մարզադաշտ | հատ | 1 | Գնահատ-ված չէ | 0.0 | Ենթակա է կառուցապատմ |
| 16. | Գերեզմանոց | հատ | 1 | Գնահատ-ված չէ | 0.0 | Բավարար |
| 17. | Երկաթյա պահարան | կազմ | 1 | Գնահատ-ված չէ | 0.0 | Բավարար |
| 18. | Գրասեղան | հատ | 5 | 28000 | 140000 | Բավարար |
| 19. | Սեղան | հատ | 3 | 25000 | 75000 | |
| 20. | Աթոռ | հատ | 10 | 10000 | 40000 | Բավարար |
| 21. | Աթոռ | հատ | 2 | 17000 | 34000 | Բավարար |
| 22. | Պահարան | հատ | 1 | Գնահատ-ված չէ | 0.0 | Մաշված է |
| 23. | Նավթամթերքի մետաղյա տարրա | հատ | 8 | Գնահատ-ված չէ | 0.0 | Ենթարկված է կոռոզիայի |
| 24. | Ավտոմեքենա ԳԱԶ3129 | հատ | 1 | 2630000 | 2630000 | Ենթակա է վերանորոգման |
| 25. | Ավտոմեքենայի գազաբալոնային սարք | հատ | 1 | 333200 | 333200 | Բավարար |
| 26. | Համակարգիչ Պենտիում-4 | հատ | 1 | 188000 | 188000 | Բավարար |
| 27. | Մոնիտոր | հատ | 1 | 105000 | 105000 | Բավարար |
| 28. | Տպիչ | հատ | 1 | 47000 | 47000 | Բավարար |
| 29. | Ստեղնաշար | հատ | 1 | 6000 | 6000 | Բավարար |
| 30. | Մկնիկ | հատ | 1 | 3000 | 3000 | Բավարար |
| 31. | Գազի վառարան | հատ | 1 | 60000 | 60000 | Բավարար |

| Գրադարանի գույք | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| 1. | Քարտարկղ | հատ | 1 | Գնահատված չէ | 0.0 | Մաշված |
| 2. | Գրասեղան | հատ | 1 | Գնահատված չէ | 0.0 | Մաշված |
| 3. | Երկաթյա գրադարակ | հատ | 32 | Գնահատված չէ | 0.0 | Բավարար |
| 4. | Ցուցափեղք | հատ | 4 | Գնահատված չէ | 0.0 | Բավարար |
| 5. | Գրքի ցուցափողք | հատ | 2 | Գնահատված չէ | 0.0 | Բավարար |
| 6. | Գրապահարան | հատ | 4 | Գնահատված չէ | 0.0 | Բավարար |
| 7. | Գրականություն | Կտոր | 6650 | Գնահատված չէ | 0.0 | Մաշված |
| Մշակույթի տան գույք | | | | | | |
| 1. | Սեղան | հատ | 1 | Գնահատված չէ | 0.0 | Մաշված |
| 2. | Բիլիարդ փոքր | հատ | 1 | Գնահատված չէ | 0.0 | Մաշված |
| 3. | Կախիչ | հատ | 1 | Գնահատված չէ | 0.0 | Մաշված |
| 4. | Դահլիճի նստարան | հատ | 150 | Գնահատված չէ | 0.0 | Մաշված |

## 1.7.ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքում կա 220 բնակելի տներ 220000 քառ.մ ընդհանուր մակերեսով և բազմաբնակարանային շենքեր 1870 քառ.մ ընդհանուր մակերեսով: Բոլոր բնակելի տնե կառուցվել են նախքան երկրաշարժը, միայն 2շենքերն են կառուցվել 90-ակ թվականներին: Բնակելի տներից 204-ը սեփականաշնորհված են և հանդիսանում համայնքի բնակիչների սեփականությունը, իսկ 24 բնակելի տներ հանդիսանում համայնքի սեփականություն: Բնակավայրը գտնվում է 1988թ. Սպիտակի աղետս

երկրաշարժի գոտում: Համայնքի բնակֆոնդի մոտ 20-%-ը ստացել է 3-4 աստիճա վնասվածություն և նրանց մեծ մասը ենթակա է ուժեղացման ու վերանորոգման:

Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեն համայնքի 10 երիտասա ընտանիքներ:

Համայնքում կա 10 բնակելի տների անավարտ շինարարություն, որոնք շուրջ 20 տար ինչ դադարեցված են՝ կառուցողների ոչ բավարար ֆինանսական հնարավորություննե պատճառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ՈՒՆԵՑՍ ԽՆԴԻՐՆԵՐԻ

| N | Խնդրի նկարագրությունը | Շենքերի քանակը | Բնակչության թվաքանակը |
|---|---|---|---|
| 1. | Վթարային տներ | 16- | 80 |
| 2. | Տանիքի նորոգման խնդիր ունեցող | 10 | 46 |
| 3. | Կոյուղացման և կոյուղու ցանցի վերանորոգման խնդիր ունեղող | 220 | 1056 |
| 4. | Ջրամատակարարման խնդիր ունեցող | - | - |
| 5. | Հիմնանորոգման խնդիր ունոցող | 8 | 25 |
| 6. | Ընթացիկ վերանորոգման խնդիր ունոցող | 30 | 148 |
| 7. | Շրջակայքի բարեկարգման խնդիր ունոցող | 220 | 1056 |

## 1.8. ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ

Բնակավայրի խմելու ջրի ներտնտեսային համակարգը կառուցվել է 1979 թվականի Այն ունի 4.5 կմ երկարություն: Ջրամատակարարումն իրականացվում է 8 լիտր/վրկ

հզորության խորքային պոմպի, 240 և 400 տոննա տարողության օրական կարգավորման ջրամբարների միջոցով: Ցանցի քայքայվածության պատճառով հաճախակի են ջրագծերի վթարները, ջրի կորուստներն ու աղտոտումները: Վերանորոգման կարիք ունեն պոմպակայանը և օրական կարգավորման ջրամբարները: Պոմպակայանի ոչ բավարար հզորության պատճառով բնակավայրի խմելու ջուրը մատակարարվում է օրական 2-3 ժամ գրաֆիկով:

Համայնքի ոռոգման համակարգը կառուցվել է 1980-ական թվականներին և ունի 96.2 կմ ընդհանուր երկարություն, որը նախատեսված է եղել 180 հա վարելահողերի ոռոգման համար: Ցանցի քայքայվածության պատճառով դաշտերի ոռոգում չի իրականացվում և գործում է միայն գյուղամիջյան տնամերձ հողամասերի մոտ 45 հա ոռոգման ցանցը: Ցանցի վերանորոգման դեպքում կարող է ոռոգվել 180 հա վարելահող:

Բնակավայրի հարևանությամբ է գտնվում Ախուրյանի ջրամբարը: Համապատասխան համակարգի կառուցման դեպքում առկա հսկայածավալ ջրային պաշարները կարող են օգտագործվել համայնքի ոռոգման կարիքների համար:

## 1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

Անբարեկարգ և քայքայված վիճակում են ինչպես մայրուղի բնակավայր 0.8 կմ, այնպես էլ շուրջ 8 կմ ընդհանուր երկարության ներհամայնքային ճանապարհները: Դաշտամիջյան ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 20 կմ: Նրա առանձին տեղամասերի քայքայվածության պատճառով այն գյուղատնտեսական տեխնիկայի համար դարձել են անանցանելի և լուրջ դժվարություններ են ստեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ժամանակ: Համայնքի ուժերով և ներգրավված միջոցներով պարբերաբար կատարվել են բնակավայր մտնող 0.8 կմ և ներհամայնքային ճանապարհների առանձին հատվածների փոսալցման աշխատանքներ, սակայն այն բավարար համարել չի կարելի:

Բնակավայրում գործում է փոստային բաժանմունք:

Համայնքում առկա է բնակիչների սեփականությունը հանդիսացող 60 մարդատար ավտոմեքենա:

Բնակավայրը պահովված է <<ՎԻՎԱՍԵԼ ՄՏՍ>>, <<ՕՐԱՆԺ>>, <<ԲԻԼԱՅՆ>> բջջային և <<Արմենտելի>> կողմից սպասարկվող ֆիքսված հեռախոսակապով: Ֆիքսված հեռախոսակապով են ապահովված համայնքի 35 տնտեսություններ:

Բնակավայրն ընդունում է 4 հանրապետական և 3 մարզային հեռուստաալիքներ: Թույլ l ինտերնետային կապը:

Բնակավայր - մարզկենտրոն տրանսպորտային կապն ապահովվում է միկրոավտոբուսյ 2 երթուղիների միջոցով: Մեկ ուղևորի փոխադրավարձը կազմում է 300 դրամ:

Մայրաքաղաքի և հարևան համայնքների հետ կապն ապահովվում է Գյումրի-Արմավիր-Երևան երթուղային ավտոբուսների և միկրոավտոբուսների միջոցով: Աղինի երկաթուղայի կայարանը համայնքից գտնվում է 6 կմ հեռավորության վրա, որի միջոցով ապահովվում l համայնքի բնակիչների փոխադրումները՝ քաղաքներ Արմավիր և Երևան:

## 1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքը համախմբված է:

Բնակչությունը սերտ կապեր ունի մայրաքաղաքի, մարզկենտրոնի, նախկին շրջկենտրոնի և շրջակա բոլոր համայնքների հետ:

Համայնքը համագործակցում է ինչպես հանրապետությունում գործող քաղաքական l հասարակական կազմակերպությունների, այնպես էլ միջազգային կազմակերպություններ] ու հիմնադրամների հետ:

Համայնքն անդամակցում է <<Հայաստանի համայնքների միություն>> իրավաբանակա անձանց միությանը, համագործակցության կապեր ունի <<Գյուղական տարածքներ] տնտեսական զարգացման>> ծրագրի, <<Հայաստան համահայկական հիմնադրամի>> <<Սոցիալական ներդրումների հիմնադրամի>>, <<Գյուղական բարեփոխումներ] աջակցության ծրագրի>>, ՄԱԿ-ի ՀՊԾ <<Սնունդ աշխատանքի դիմաց>> ծրագրի, <<Շիրակ հասարակական կազմակերպությունների միություն>> ՀԿ-ի, <<Շիրակի հասարակակա կազմակերպությունների միություն>> ՀԿ-ի, ներդրումային այլ կազմակերպությունների ո հիմնադրամների հետ:

Հոգևոր ոլորտում համայնքը համագործակցում է Շիրակի Առաջնորդարանի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ:

## 1.11.ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ `

Համայնքի վարչական տարածքը կազմում է 746.5հա,որից

1. գյուղատնտեսական նշանակության հողեր –360.34հա,

այդ թվում՝

- վարելահողեր – 431.52հա,

այդ թվում՝

սեփականաշնորհված – 360.34 հա,

համայնքային սեփականության –

- արոտներ – 150հա.
- այլ հողատեսքեր – հա:

Վարելահողերի մեկ հեկտարից ստացվող զուտ եկամտի կադաստրային միջին գնահատականը կազմում է 54600 դրամ, իսկ արոտներինը՝ 6800 դրամ:

Սեփականաշնորհված վարելահողերի մեկ հողբաժնի չափը կազմում է   հա.

2. Բնակավայրի հողեր – -
3. Արդյունաբերական, արտադրական նշանակության հողեր 5.23
4. Ճանապարհների տակ օգտագործվող հողեր – 22.9 հա.
5. Պատմամշակութային նշանակության հողեր – 0.93 հա.
7. Ջրային ֆոնդի հողեր – 10.02հա.
8. Հատուկ նշանակության հողեր – 0.93 հա.

## *1.12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ*

Գյուղտնտեսության բնագավառի հիմնական ճյուղերը բանջարաբոստանային կուլտուրաների մշակությունն ու անասնապահությունն են: Ոռոգման ջրի, բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանների /երաշտ, կարկտահարություն, ցրտահարություն և այլն/ ոչ բացակայության պատճառով համայնքի գյուղացիական տնտեսությունները լուրջ դժվարությունների առաջ են կանգնած գյուղատնտեսական մթերքների կայուն արտադրություն կազմակերպելու և բարձր բերքատվություն ապահովելու համար:

Համայնքում կազմավորված են 296 գյուղացիական տնտեսություններ, որոնց կողմից մշակվում է 360.34 հա վարելահող և օգտագործվում 150.0հա արոտ: Համայնքի տնտեսությունների սեփականությունն է հանդիսանում 360.34 հա վարելահող, իսկ թվով 35տնտեսությունների կողմից օրենքով սահմանված կարգով վաձակալված է 40.0 հա վարելահող: Համայնքում վարելահող չունեցող տնտեսություններ 3-ն են:

Դաշտավարության բնագավառում տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կերային մշակաբույսերի, կարտոֆիլի, կաղամբի և բանջարա-բոստանային այլ կուլտուրաների մշակությամբ: Գյուղատնտեսական մթերքների արտադրության

արդյունավետությունը ուղղակիորեն կախված է բնակլիմայական պայմաններից Ցանքատարածությունները մշտապես վտանգված են ցրտահարությամբ: Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը բնակլիմայական բարենպաստ պայմանների դեպքում կազմում է 25-30 ցենտներ, իսկ երաշտի, ցրտահարության կամ կարկտահարության դեպքում կորուստը կարող է կազմում է 50-100%: Բուսաբուծության զարգացմանը մեծապես խոչընդոտում է ոռոգման համակարգի քայքայվածությունը լավորակ սերմերի բացակայությունը, գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների մաշվածությունն ու պակասը, դիզելային վառելանյութի, պարարտանյութերի և թունաքիմիկատների բարձր գները:

Բուսաբուծության բնագավառում վերջին 10 տարիներին արձանագրվել է հացահատիկի և կարտոֆիլի արտադրության ծավալների աճ:

Գյուղացիական տնտեսությունների կողմից պահվում է 722 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, այդ թվում կովեր` 336 գլուխ, ոչխարներ և այծեր` 120գլուխ, խոզեր 57 գլուխ Առանձին տնտեսություններ զբաղվում են նաև թռչնաբուծությամբ /հավեր` 1280 թև/ և մեղվապահությամբ /60 մեղվաընտանիք/:

Անասնապահության բնագավառում վերջին 10 տարիներին համայնքում արձանագրվել է մսի և կաթի արտադրության ծավալների ավելացում:

Գյուղում կա 15 տրակտոր, 1 կոմբայն, 1 խոտհնձիչ, 10 բեռնատար ավտոմեքենա տասնյակ գյուղատնտեսական գործիքներ ու մեխանիզմներ:

Գյուղտնտեսական մեքենաներն ու մեխանիզմները բարոյապես ու ֆիզիկապես մաշված են, կա գյուղատնտեսական տեխնիկայի և պահեստամասերի մեծ պահանջարկ:

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ*

### *1. Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործումը*

| Հողատեսքի անվանումը | 2012թվական | |
|---|---|---|
| | Քանակը /հա/ | Որից օգտագործվում է /հա/ |
| Ընդամենը գյուղտնտեսական նշանակության հողեր, որից՝ | 599058 | 431.52 |
| Վարելահող | 431.52 | 410.0 |
| Բազմամյա տնկարկներ | 0.0 | 0.0 |
| Խոտհարքներ | 0.0 | 0.0 |
| Արոտավայրեր | 150.0 | 150.0 |
| Այլ գյուղատնտեսական հողեր | 0.0 | 0.0 |

*2.Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը*

| | Ցանկատարածությունների կառուցվածքը | 2016 թվական | | % ը վարելահողերի ընդհանուր քանակի նկատմամբ /431.52հա/ |
|---|---|---|---|---|
| | | Քանակը /հա/ | Մեկ հեկտարից ստացվող միջին բերքը /բերքատվություն/ տոննա | |
| 1. | *Ընդամենը հացահատիկային մշակաբույսեր, այդ թվում՝* | *180* | *3.0* | 41.7 |
| | Ցորեն | 60.0 | 3.0 | 13.9 |
| | Գարի | 120.0 | 3.0 | 27.8 |
| | Այլ հացահատիկային մշակաբույսեր | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2. | *Ընդամենը կերային մշակաբույսեր, այդ թվում՝* | *50.0* | *3.0* | *11.5* |
| | Խոտ | 20.0 | 3.0 | 4.5 |
| | Առվույտ | 30.0 | 3.0 | 7.0 |
| 3. | *Ընդամենը բանջարաբոստանային մշակաբույսեր, այդ թվում՝* | *180.0* | *25.0* | *41.7* |
| | Կարտոֆիլ | 80.0 | 25.0 | X |
| | Կաղամբ,այդ թվումծաղկակաղամբ | 90.0 | 25.0 | X |
| | Գազար | 8.0 | 40.0 | X |
| | Բանջարաբոստանային այլ մշակաբույսեր | 2.0 | 30.0 | X |
| 4. | *Այլ / ցել /* | - | | - |
| 5. | *Չմշակվող վարելահողեր* | *22* | *0.0* | *5.0* |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *432* | *X* | *X* |

*3. Հիմնական մշակաբույսերի միջին համախառն բերքը /բերքատվություն/*

| Մշակաբույսի տեսակը | 2016 թվական |
|---|---|
| **Հացահատիկ** | |
| Ցանքատարածքը /հա/ | 180 |
| 1 հեկտարի միջին բերքատվությունը /տոննա/ | 3.0 |
| Համախառն բերքը/տոննա/ | 540.0 |
| **Կերային մշակաբույսեր** | |
| Ցանքատարածքը | 50.0 |
| 1 հեկտարի միջին բերքատվությունը /տոննա/ | 3.0 |
| Համախառն բերքը/տոննա/ | 150.0 |

| | |
|---|---|
| Կարտոֆիլ | |
| Ցանքատարածքը | 80 |
| 1 հեկտարի միջին բերքատվությունը/տոննա/ | 25 |
| Համախառն բերքը/տոննա/ | 2000.0 |
| Կաղամբ | |
| Ցանքատարածքը | 90.0 |
| 1 հեկտարի միջին բերքատվությունը /տոննա/ | 25.0 |
| Համախառն բերքը/տոննա/ | 2250.0 |
| Բանջարաբոստանային այլ մշակաբույսեր | |
| Ցանքատարածքը | 10.0 |
| 1 հեկտարի միջին բերքատվությունը/տոննա/ | 40.0 |
| Համախառն բերքը/տոննա/ | 400.0 |

*4. Անասնագլխաքանակը*

/գլուխ/

| Գյուղատնտեսական կենդանիների տեսակները | 01.01.201[illegible]թ. հաշվառման տվյալներով |
|---|---|
| Խոշոր եղջերավոր անասուններ | 722 |
| որից՝ կովեր | 336 |
| ոչխարներ և այծեր | 120 |
| Խոզեր | 57 |
| թռչուններ | 1280 |
| մեղվաընտանիքներ | 60 |

*5. Անասնապահական մթերքների արտադրության ծավալները և անասունների մթերատվությունը*

| Անասնապահական մթերքի տեսակը | 201[illegible] թվական |
|---|---|
| *Մթերատվությունը* | |
| Մեկ պայմանական գլուխ խոշորի մթերատվությունը, տոննա | 120 |
| 1 կովի կաթնատվությունը /լիտր/ | 1500 |
| 1 ոչխարի բրդատվությունը /կգ/ | 2.6 |
| 1հավի ձվատվությունը /հատ/ | 150 |
| 1 մեղվաընտանիքի մթերատվությունը /կգ/ | 10.0 |
| *Արտադրության ծավալները* | |
| Մսի արտադրություն /տոննա/ | 120 |
| Կաթի արտադրություն /տոննա/ | 500 |
| Բրդի արտադրություն /տոննա/ | 0.9 |

| | |
|---|---|
| Ձվի արտադրություն /հազ. հատ/ | 300.0 |
| Մեղրի արտադրություն /տոննա/ | 1.6 |

*6.Համայնքում առկա գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ*

| Գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների անվանումը | Չափի միավոր | Քանակը |
|---|---|---|
| Թրթուրավոր տրակտոր | հատ | 4 |
| Անվավոր տրակտոր | հատ | 4 |
| Հացահատիկային կոմբայն | հատ | 1 |
| Խոտհնձիչ կոմբայն | հատ | 1 |
| Բեռնատար ավտոմեքենա | հատ | 8 |
| Տրակտորային կցասայլ | հատ | 7 |
| Գութան | հատ | 3 |
| Կուլտիվատոր | հատ | 4 |
| Շարքացան | հատ | 2 |
| Հակավորող մեքենա | հատ | 2 |
| Կերամանրիչ մեքենա | հատ | - |

## *1.14. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ*

Համայնքի դպրոցը տեղակայված է նախկին մանկապարտեզի շենքում,որտ ներկայումս սովորում են 98 աշակերտներ:

Դպրոցն ունի 24 մանկավարժ և 3 սպասարկող անձնակազմ, մանկավարժներից 20 ունեն բարձրագույն կրթություն, որից 21-ը կանայք են:

Դպրոցի շենքը 2010 թվականներին վերանորոգվել է Հայաստանի սոցիալակ ներդրումների հիմնադրամի միջոցներով, իսկ պետական բյուջեի միջոցներ 2011թվականին վերանորոգվել է սպորտ դահլիճը: Դպրոցն հիմնականում ապահովված անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և ուսումնա-մեթոդական նյութերով:

*Աշակերտների բաշխումն ըստ դասարանների*

| N | | Աշակերտների թիվը | Դպրոցում ընդգրկված աշակերտների թիվը ըստ տարիքային խմբերի | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Դպրոցահեն նախակրթարան | | 3-6 տարեկան | | | |
| | | | Տղա | | Աղջիկ | |
| | | | 19 | | 11 | |
| 2. | Տարրական դպրոց /1-4-րդ դասարաններ/ | 27 | Մինչև 7 տարեկան | | 7 տարեկանից բարձ | |
| | | | Տղա | Աղջիկ | Տղա | Աղջիկ |
| | | | 3 | 3 | 13 | 14 |
| 3. | Միջին դպրոց /5-9-րդ դասարաններ/ | 35 | Տղա | | Աղջիկ | |
| | | | 19 | | 16 | |
| 4. | Ավագ դպրոց /10-12-րդ դասարաններ/ | 36 | Տղա | | Աղջիկ | |
| | | | 16 | | 20 | |
| | Ընդամենը | 98 | | | | |

Վերանորոգման և գույքի նորացման կարիք ունի մշակույթի տունը:

Համայնքը չունի հանգստի գոտի կամ այլ հարմարություններ՝ որտեղ հնարավոր կլին կազմակերպել համայնքի բնակչության հանգստն ու ազատ ժամանցը, երեխաներ մշակութային ու գեղագիտական դաստիարակությունը:

Համայնքի բնակչության առողջապահական սպասարկումն իրականացվում է Ախուրիկ Գյումրու առողջության կենտրոնների և համայնքի բուժ. մանկաբարձական կետի միջոցո որտեղ աշխատում է 1 բուժքույր: Համայնքի բուժ. մանկաբարձական կետը գտնվում մշակույթի տանը, որտեղ հատկացված է առանձին սենյակ:

## *1.15.ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ*

- Բերրի վարելահողերի առկայությունը.
- Ախուրյանի ջրամբարին մոտ գտնվելը;

- Գյումրի-Արմավիր մայրուղուն մոտ գտնվելը.
- Երկաթուղուն մոտ գտնվելը.

- Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կադրերի, բանվորական աշխատուժի առկայությունը.
- Համայնքի բնակչության համախմբվածությունը:

## 1.16.ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ոռոգման համակարգի քայքայվածությունը:
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները:
- 1988 թ. երկրաշարժի հետևանքով համայնքի բնակֆոնդին հասված վնասները:
- Համայնքի բնակչության սոցիալական անապահով վիճակը և ցածր կենսապայմանները:
- Գյուղացիական տնտեսությունների արտադրական փոքր կարողությունները:
- Գյուղատնտեսական տեխնիկայի պակասը, առկա տեխնիկայի մաշվածությունը:
- Գազաֆիկացման բացակայությունը:
- Մշակույթի տան քայքայված վիճակը:
- Հանգստի գոտու բացակայությունը:
- խմելու ջրի ներտնտեսային ցանցի և օրական կարգավորման ջրամբարների քայքայվածությունը և պոմպակայանի մաշվածությունը:
- Գործազրկության բարձր մակարդակը:
- Տեղական բյուջեի սահմանափակ միջոցները:

## 1.17.ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Երկարաժամկետ և մատչելի տոկոսադրույքներով գյուղատնտեսական նպատակային վարկերի տրամադրման և սուբսիդավորման միջոցով գյուղատնտեսական տեխնիկայի նորացում, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացում, վերամշակման փոքր և միջին ձեռնարկությունների հիմնում:

## 1.18.ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Ուժեղ սեյսմիկ գոտում գտնվելը:
-Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները /երաշտ, կարկտահարություն, ցրտահարություն, ուժեղ քամիներ/:

- Խմելու ջրի ներտնտեսային ցանցի և ՕԿՋ –ի քայքայվածությունը, պոմպակայանի ոչ լիաժերք հզորությունը, խմելու ջրի կորուստներն ու աղտոտումները.
- Կոյուղաջրերի հեռացման ցանցի բացակայությունը.
- Թուրքիային սահմանակից լինելը.
- Բնակչության ցածր կենսապայմանները.
- Տեղական բյուջեի սահմանափակ միջոցները և համայնքում ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը:

## 2.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

### *2.1.Համայնքի ռազմավարությունն է՝*

Տնտեսական և սոցիալական ոլորտների բարեփոխումների ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, բարձրացնել բնակչության կենսամակարդակը:

Գյուղատնտեսության ճյուղի և փոքր ու միջին բիզնեսի զարգացման միջոցով ավելացնել նոր աշխատատեղեր և կանխել արտագաղթը համայնքից:

### *2.2. Հիմնական նպատակները*

- Ոռոգման համակարգի վերանորոգում, ցանցի ընդլայնում:
- Խմելու ջրի մատակարարման բարելավում:
- Մշակույթի տան հիմնանորոգում:
- Բնակելի տների տանիքների վերանորոգում:
- Ներհամայնքային ճանապարհների վերանորգում:
- Դաշտամիջյան ճանապարհների փռսալցում.

- Գազամատակարարման ցանցի կառուցում:
- Գյուղացիական տնտեսությունների կարողությունների զարգացում:
- Գյուղատնտեսական տեխնիկայի նորացում:

- Համայնքում գյուղատնտեսական մթերքների վերամշակման փոքր և միջին ձեռնարկությունների հիմնում, նոր աշխատատեղերի ստեղծում:
- Անհատական բնակարանային շինարարության խթանում:
- Համայնքի մշակութային կյանքի աշխուժացում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում:
- Համայնքում հանգստի գոտու հիմնում:
- Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցության կազմակերպում:

# 3.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

## *3.1. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

Համայնքում ծառայություններ մատուցելու և ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է հողի հարկից, գույքահարկից և վարձակալության տրված համայնքի սեփականությու հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձավճարներից: Վերջին 10 տարիներին համայնքի բյուջեի սեփական եկամուտները կատարվել են 85-100 տոկոսով: Բյուջեի մուտքերի հիմնական մասը նպատակաուղղվել են ընթացիկ աշխատավարձերի ու սոցիալական ապահովության պարտադիր վճարների վճարմանը, միջհամայնքային ճանապարհների փոսային նորոգմանը, փոքրածավալ ծառայությունների մատուցմանը /աղբահանության կազմակերպում, փողոցների լուսավորության ցանցի վերականգնում, ցանցի սպասարկում և այլն/, սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնությունների տրամադրմանը, այլ ծրագրերի իրականացման համար համայնքից պահանջված ներդրումների կատարմանը, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը:

Համայնքի բյուջեի ֆինանսական կարողությունները հնարավորություն չեն տալիս լուծելու համայնքում առկա և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները: Այդ հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ է պետական մարմինների,

կապակը:

2013- 2016թթ. նախատեսվում է իրականացնել առաջնահերթ լուծում պահանջող հետևյալ ծրագրերը՝

<u>ԾՐԱԳԻՐ թիվ 1</u>

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

*Մայրուղի Ղարիբջանյանի 0.8 կմ ճանապարհի ասֆալտապատում*

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Մայրուղի [illegible] 0.8 կմ ճանապարհը գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում, առանձին տեղամասեր ձնհալի և անձրևային եղանակների ժամանակ տրանսպորտային միջոցների, գյուղատնտեսական տեխնիկայի և հետիոտն երթևեկության համար դառնում են անանցանելի: Ճանապարհի քայքայվածության պատճառով վերջին տարիներին գրանցվել է տրանսպորտային միջոցների 2 պատահար:

ՀՀ կառավարությունը վերջին տարիներին մեծ կարևորություն է տալիս միջհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման խնդիրներին:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է տրանսպորտային միջոցների, գյուղատնտեսական տեխնիկայի և հետիոտն երթևեկության համար ապահովել բարեկարգ և հարմարավետ ճանապարհ:

ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ

1. Ամբողջությամբ ասֆալտապատման է ենթակա Ղարիբջանյան-Ազատան միջհամայնքային նշանակության ճանապարհը :

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել Ղարիբջանյան-Ազատան միջհամայնքային ճանապարհի ընդհանուր երկարության տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները, կազմել

թերությունների ակտ և պատվիրել ճանապարհի ասֆալտապատման նախագծ նախահաշվային պաստատղթեր:

- Դիմել ՀՀ Շիրակի մարզպետին Ղարիբջանյան-Ազատան միջհամայնքային 0.8 ընդհանուր երկարության ճանապարհի /5000 քառ.մ./ և նույնքան երկարության մայ կառուցման և ասֆալտապատման աշխատանքները մարզի հրատապ լուծ պահանջող հիմնախնդիրների լուծման 2013 թվականի ծրագրում ընդգրկելու հարցով:
- Ապահովել ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված համայնքներում հրատա լուծում պահանջող ծրագրերի իրականացման համար պարտադիր համարվ համայնքի բյուջեի սեփական եկամուտների կատարման առնվազն 90 տոկոս ցուցանի
- Ըստ ամենայնի աջակցել ծրագրով նախատեսված աշխատանքների կատարմանը:

## ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

Ծրագրով նախատեսվում է ասֆալտապատել Ղարիբջանյան-Ազատան նշանակությ 0.8 կմ ընդհանուր երկարության ճանապարհը /5000 քառ.մ./, հետիոտն երթևեկությ համար կառուցել 08 կմ երկարության միակողմանի մայթ:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել պետական բյուջեից ՀՀ Շիրակի մարզ հատկացվող հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման 2013 թվական ծրագրի շրջանակներում:

## ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար կապահովվի բարեկարգ հարմարավետ ճանապարհ, կկանխվի տրանսպորտային միջոցների հնարավոր վթարնե ու խափանումները:

## ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 40.0 մ դրամի ներդրում:

## ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրն իրականացնել 2013 թվականին:

## ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Ղարիբջանյան համայնքի ղեկավար՝ Մանվել Պողոսյան:

# Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 2

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

*ՀՀ Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի ոռոգման համակարգի վերանորոգում, ցանցի ընդլայնում*

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի ոռոգման համակարգը կառուցվել է 1980-ական թվականներին և ունի 96.2 կմ ընդհանուր երկարություն: Այն նախատեսված է եղել 180 հա վարելահողերի ոռոգման համար: Ցանցի քայքայվածության պատճառով դաշտերի ոռոգում չի իրականացվում և գործում է միայն գյուղամիջյան տնամերձ հողամասերի մոտ 45 հա ոռոգման ցանցը: Ցանցի վերանորոգման և ընդլայնման դեպքում կարող է ոռոգվել շուրջ 200 հա վարելահող:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է ոռոգման համակարգի վերանորոգման և ցանցի ընդլայնման միջոցով ոռոգելի դարձնել համայնքի շուրջ 200 հա վարելահողերը: Բարձրացնել դաշտավարության արդյունավետությունը:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել առկա ոռոգման համակարգի տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները և ցանցի ընդլայնման հնարավորությունները, կազմել թերությունների ակտ և պատվիրել նախագծա-նախահաշվային պաստաթղթեր:
- Ծրագրի ֆինանսավորման հարցով դիմել <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի>> /ԳՏՏԶԾ/ իրականացման գրասենյակին:
- Ապահովել ծրագրի իրականացման համար համայնքից պահանջվող 10 տոկոս ներդրումը:
- Ըստ ամենայնի աջակցել ծրագրով նախատեսված աշխատանքների կատարմանը:
- Ծրագրի ավարտից հետո ապահովել ցանցի անխափան շահագործումը:

ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

Ծրագրով նախատեսվում է իրականացնել 180 հա ոռոգման համակարգի վերանորոգման և 20 հա ցանցի ընդլայնման աշխատանոններ:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի>> /ԳՏՏԶԾ-ԻՖԱԴԻ/ և համայնքի ներդրման միջոցներով: Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 80 մլն. դրամի ներդրում:

## ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ ոռոգելի կդառնա համայնքի շուրջ 200 հա վարելահողեր: Կբարձրացրանա դաշտավարության արդյունավետությունը:

## ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 80 մլն. դրամի ներդրում, որի 10 տոկոսը՝ գումարով 8 մլն. դրամ պարտավորվում է ապահովել համայնքը:

Համայնքից պահանջվող ներդրման 30 տոկոսը /2.4 մլն. դրամ/ ապահովել աշխատանքի տեսքով, 30 տոկոսը /2.4 մլն. դրամ/՝ շինարարական նյութերի տեսքով, իսկ 40 տոկոսը /3.2 մլն. դրամ/՝ գումարի տեսքով:

## ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրն իրականացնել 2016 թվականին:

## ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

[illegible] համայնքի ղեկավար՝ [illegible]:

## ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ՝

Համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

# <u>Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 3</u>

## ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

*ՀՀ Շիրակի մարզի [illegible] համայնքի արոտների բարելավում*

## ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքը չունի արոտների ջրարբիացման համակարգ:

Արոտավայրերում անասուններին ջրելու համար համապատասխան հարմարությունների բացակայության պատճառով համայնքի գյուղացիական տնտեսությունների կողմից պահվող մոտ 900 գլուխ խոշոր և 400 գլուխ մանր եղջերավոր անասունները հարկադրաբար օրական կատարվում են 6-8 կմ վազք: Այն բացասաբար է անդրադառնում ինչպես կաթնատվության, այնպես էլ մթերատվության վրա:

Համապատասխան ցանցի կառուցման դեպքում համայնքում առկա ջրային բավարար ռեսուրսներ արոտների ջրարբիացում կազմակերպելու համար:

Ծրագրի ֆինանսավորման հարցով համայնքը արդեն դիմել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության <<Գյուղական բարեփոխումների աջակցության ծրագրի>> իրականցման գրասենյակին և վերջինիս կողմից կատարվում են համապատասխան ուսումնասիրություններ:

## ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է արոտների ջրարբիացման համակարգի կառուցման միջոցով արոտներն ապահովել անասունների խմելու ջրով, կանխել անասունների անտեղի վազքը, բարձրացնել կովերի կաթնատվությունն ու անասունների մթերատվությունը:

## ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել արոտների բարելավման ծրագրի իրականացման տեխնիկական պայմաններն ու տնտեսական հնարավորությունները, ճշտել աշխատանքների ծավալներն ու պատվիրել նախագծա-նախահաշվային պատաստղթեր:
- Ապահովել ծրագրի իրականացման համար համայնքից պահանջվող 10 տոկոս ներդրումը:
- Ըստ ամենայնի աջակցել ծրագրով նախատեսված աշխատանքների կատարմանը:

## ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

Ծրագրով նախատեսվում է ջրարբիացման ցանց կառուցել համայնքի արոտների

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել ՀՀ գյուղատնտեսության նախարարության <<Գյուղական բարեփոխումների աջակցության ծրագրի>> /ԳԲԱԾ/ և համայնքի կողմից

կատարվելիք 10 տոկոս ներդրումների միջոցներով: Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի                   ներդրում:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Արտների ջրարբիացմամբ համայնքի արետների                   կապահովվեն անասունների խմելու ջրով, կկանխվի անասունների անտեղի վազքը, կավելանա կովերի կաթնատվությունն ու անասունների մթերատվությունը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի

ներդրում

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրն իրականացնել 2014 թվականին:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Հարթի համայնքի ղեկավար՝ Մ. Պողոսյան

ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ՝

Համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

## <u>Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 3</u>

<u>ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝</u>

*ՀՀ Շիրակի մարզի Հարթի համայնքի խմելու ջրի մատակարարման բարելավում*

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի խմելու ջուրը մատակարարվում է բնակավայրում տեղադրված 8 լիտր/վրկ հզորության 1 խորքային պոմպի և 240, 400 տոննա տարողության օրական կարգավորման ջրամբարների միջոցով: Խմելու ջրի որակը, որը պարբերաբար ստուգվում է հակահամաճարակային ծառայության կողմից, բնութագրվում է բավարար և խմելու համար պիտանի:

Համայնքի խմելու ջրի մատակարարման սպասարկումն իրականացվում է Ջրափիի գյուղապետարանի կողմից:

Համայնքի ջրամատակարարման ներտնտեսային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 4500 մ: Այն կառուցվել է 1979 թվականին և երբևէ հիմնական նորոգման չի ենթարկվել: Ջրատար խողովակների մոտ 50%-ը քայքայված են և ենթարկված են կոռոզիայի: Հաճախակի են ցանցի վթարներն ու դրանց հետևանքով ջրի աղտոտումները, ծայրամասային առանձին թաղամասեր ապահովված չեն խմելու ջրով և իրենց կարիքների համար անհրաժեշտ ջուրը մինչև 200 մ հեռավորությունից տեղափոխում են դույլերով և սայլակներով: Վերանորոգման կարիք ունեն պոմպակայանը և օրական կարգավորման ջրամբարները:

Խորքային 1 պոմպի հզորությունը չի բավարարում համայնքի խմելու ջրի պահանջարկը ապահովելու համար: Մինչև 1990 թվականը համայնքի խմելու ջուրը մատակարարվել է 2 խորքային պոմպերի միջոցով: Այն բավարարել է ինչպես համայնքի բնակչության կենցաղային կարիքներ, այնպես էլ հնարավոր է եղել նաև ոռոգել տնամերձ բանջարանոցներն ու պտղատու ծառերը:

Մղվող ջրի ոչ բավարարար քանակի պատճառով ներկայումս համայնքում ջրամատակարարումն իրականացվում է ժամային գրաֆիկով, ըստ թաղամասերի օրական մինչև 2-3 ժամ տևողությամբ: Անհրաժեշտ սարքավորումների բացակայության պատճառով խմելու ջրի քլորացում չի կատարվում:

Համայնքի բնակիչների ուժերով և բյուջեի միջոցներով անցած տարիներին պարբերաբար կատարվել են ջրագծերի առանձին հատվածների վերանորոգում, օրական կարգավորման ջրամբար տանող 300 գծ. մ. խողովակաշարի փոխարինում նորով, սակայն այդ աշխատանքները բավարար համարել չի կարելի:

## ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է բարելավել համայնքի բնակչության խմելու ջրի մատակարարումը, կանխել ջրագծերի վթարներն ու կորուստները, հնարավոր աղտոտումները: Խորքային 2-րդ

իրատանցքի բացման և 2-րդ խորքային պոմպի տեղադրման միջոցով ավելացն բնակավայր մղվող ջրի քանակը: Օրական կարգավորման 2 ջրամբարների վերականգնմա ջրի քլորացման համար համապատասխան սարքավորումների տեղադրման միջոց ապահովել էկոլոգիապես մաքուր, անվտանգ և շուրջօրյա ջրի մատակարարում: Սան առանձին հատվածների ընդլայնման շնորհիվ բնակավայրի ծայրամասային բնակելի տնե ապահովել խմելու ջրով: Բարելավել բնակչության կենցաղային պայմանները, թեթևացն հատկապես կանանց և երեխաների ֆիզիկական ծանրաբեռնվածությունը:

## ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել խմելու ջրի ներհամայնքային ցանցի տեխնիկական վիճակը, ճշտ ջրատարների առավել քայքայված տեղամասերը, վերանորոգման և ցանցի ընդլայնմ ծավալները և կազմել թերությունների ակտ:
- Ուսումնասիրել 240 և 400 տոննա տարողության օրական կարգավորման ջրամբարնե տեխնիկական վիճակը, վերանորոգման ծավալներն ու ջրի քլորացման համ համապատասխան սարքավորումների տեղադրման հնարավորությունները:
- Ուսումնասիրել 2-րդ խորքային պոմպի տեղադրման հնարավորություններն տեխնիկական պայմանները:
- Պատվիրել նախագծա- նախահաշվային փաստաթղթեր:
- Համապատասխան մասնագետների ներգրավմամբ ուսումնասիրել 2-րդ հորատանց շահագործման և խորքային պոմպի տեղադրման տեխնիկական պայմաններն հնարավորությունները:
- Ճշտել ծրագրի իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցներն աղբյուրները:
- Ծրագրով նախատեսված օժանդակ աշխատանքներն իրականացնել ՄԱԿ-ի Հ <<Սնունդ աշխատանքի դիմաց>> ծրագրի աջակցությամբ, որի համար կազ համապատասխան հայտ-առաջարկ և սահմանված ժամկետներում ներկայացն ծրագրի իրականացման Վանաձորի գրասենյակ:

## ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կքարելավվի համայնքի բնակչության խմելու ջրի մատակարարումը, կկանխվեն ջ կորուստները և հնարավոր աղտոտումները, ծայրամասային բնակելի տները կապահովվ խմելու ջրով: Համայնքում կապահովվի շուրջօրյակ ջրամատակարարում:

Կբարելավվի բնակչության կենցաղային պայմանները, կթեթևանա հատկապես կանանց և երեխաների ֆիզիկական ծանրաբեռնվածությունը:

## ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ըստ նախնական ուսումնասիրության արդյունքների բնակավայրի ջրամատակարարման բարելավման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- 8 լիտր/վրկ հզորության խորքային 2-րդ պոմպի տեղադրում:
- Գործող պոմպի վերանորոգում:
- Էլեկտրական սնուցման ավտոմատ կառավարման վահանակի տեղադրում.
- 1500գծ.մ. երկարության խմելու ջրի ներտնտեսային ցանցի վերանորոգում:
- 500գծ.մ. նոր ջրատարի կառուցում:
- 240 և 400 խ.մ տարողության օրական կարգավորման երկու ջրամբարների վերանորոգում:
- Ջրի քլորացման համար համապատասխան սարքավորումների տեղադրում:
- Նոր դիտահորերի կառուցում, կարգավորիչ փականների տեղադրում:

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 10 մլն. դրամի ներդրում:

## ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸՆ ՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրն իրականացնել համայնքի բյուջերի և ՄԱԿ-ի ՀԴԾ <<Սնունդ աշխատանքի դիմաց>> ծրագրի աջակցությամբ:

Ծրագիրն իրականացնել երկու փուլով՝ 2014-2015 թվականների ընթացքում:

Ծրագիրն իրականացման համար համայնքի 2014 թվականի բյուջեում նախատեսել 3.0 մլն. դրամ, իսկ 2015 թվականի բյուջեում՝ 2.0 մլն. դրամ:

ՄԱԿ-ի ՀԴԾ <<Սնունդ աշխատանքի դիմաց>> ծրագրի աջակցությամբ 2014 թվականի կատարել 3500 մարդ/օր ծավալի օժանդակ աշխատանքներ, իսկ 2015 թվականի՝ 2500 մարդ/օր ծավալի աշխատանքներ:

*<u>Ծրագրի 1-ին փուլն իրականացնել 2014 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին</u>*

Նախատեսել կատարել հետևյալ աշխատանքները՝

- 1500գծ.մ. երկարության խմելու ջրի ներտնտեսային ցանցի վերանորոգում:

- 500գծ.մ. նոր ջրատարի կառուցում:
- 240 և 400 խ.մ տարողության օրական կարգավորման երկու ջրամբարների վերանորոգում:
- Ջրի քլորացման համար համապատասխան սարքավորումների տեղադրում:
- Նոր դիտահորերի կառուցում, կարգավորիչ փականների տեղադրում:

*Ծրագրի 2-րդ փուլն իրականացնել 2018 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին*

Նախատեսել կատարել հետևյալ աշխատանքները`

- 8 լիտր/վրկ հզորության խորքային 2-րդ պոմպի տեղադրում:
- Գործող պոմպի վերանորոգում:
- Էլեկտրական սնուցման ավտոմատ կառավարման վահանակի տեղադրում.

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Ղարիբջանյան համայնքի ղեկավար՝ Մանվել Պողոսյան

ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ՝

ՄԱԿ-ի ՀԶԾ <<Մնունդ աշխատանքնի դիմաց>> ծրագրի Վանաձորի գրացենյակ, համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

# ԾՐԱԳԻՐ թիվ 4

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

*ՀՀ Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի մշակույթի տան վերանորոգում, անհրաժեշտ գույքի ապահովում*

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի մշակույթի տունը կառուցվել է 1978 թվականներին և մինչ օրս հիմնական նորոգման չի ենթարկվել: Մշակույթի տունը համայնքի բնակչության հանգստի և ազատ ժամանցի կազմակերպման միակ օջախն է:

Մշակույթի տան քայքայվածության և անբարեկարգ վիճակի պատճառով մշակութային միջոցառումներ գրեթե չեն կազմակերպվում և այն չի ծառայում համայնքի բնակչության կարիքների համար: Մշակույթի տունը ապահովված չէ նաև անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Համայնքի ուժերով վերջին տարիներին հնարավոր է եղել միայն մասնակիորեն նորոգել մշակույթի տան տանիքի առանձին հատվածներ և ինչ որ չափով

կանխել շենքի հետագա քայքայումը: Գյուղապետարանի ուժերով վերանորոգվել է մշակույթի տան երեք աշխատասենյակներ և որոշակի հարմարություններ են ստեղծվել գյուղապետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու աշխատանքների կազմակերպման համար:

Տեղական բյուջեի սահմանափակ միջոցներով հնարավոր չէ իրականացնել մշակույթի տան հիմնանորոգման և գույքի նորացման մեծածավալ աշխատանքներ: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է պետական մարմինների, ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

## ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Նորոգել մշակույթի տունը, այն համալրել ժամանակակից գույքով և հարմարավետ պայմաններ ստեղծել համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստիարակության համար: Վերականգնել համայնքի մշակութային նախկին ավանդույթները:

## ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Մշակել և Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամին /ՀՍՆՀ / ներկայացնել մշակույթի տան նորոգման և գույքի համալրման ծրագիրը:
- Հարցի առնչությամբ դիմել ՀՀ Շիրակի մարզպետի աջակցությանը:
- Պատվիրել մշակույթի տան նորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և ապահովել համապատասխան տեխնիկական պայմաններ:
- Համայնքում ստեղծել աշխատանքային խումբ, պահովել ծրագրի կառավարումը և աշխատանքների կազմակերպումը:
- Ապահովել ՀՍՆՀ ծրագրի շրջանակներում համայնքից պահանջվող 10 տոկոս ներդրումը:
- Ըստ ամենայնի աջակցել ծրագրի իրականացման աշխատանքներին:
- Ապահովել ծրագրի կենսունակությունը:

## ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մշակույթի տուն նորոգման և այն ժամանակակից գույքով, երաժշտական գործիքներով և սարքավորումներով համալրելու միջոցով հարմարավետ պայմաններ ստեղծել համայնքի

բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստիարակության համար:

### ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագիրն իրականացնել Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի /ՀՍՆՀ/ ֆինանսավորմամբ:

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 30.0 մլն. դրամի ներդրում, որի 10 տոկոսը՝ գումարով 4 մլն դրամ, պարտավորվում է ապահովելու համայնքը:

### ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը իրականացնել 201[illegible] թվականի ընթացքում:

### ԾՐԱԳՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝

Համայնքի բյուջեի միջոցներով ապահովել մշակույթի տան պահպանումը և սպասարկումը:

### ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Ղարիբջանյանի համայնքի ղեկավար՝ Մանվել Պողոսյան:

### ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ՝

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ, համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

## Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 6

### ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

*ՀՀ Շիրակի մարզի* [illegible] *համայնքի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում:*

### ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Շուրջ 20 տարի է ինչ լիարժեք չի գործում համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցը: Համայնքի բյուջեի միջոցներով անցած 3 տարիների ընթացքում հնարավոր է եղել տեղադրել 20 լուսարձակ, որը բավարար չէ համայնքի բնակչության

գիշերային ժամերի տեղաշարժի անվտանգությունն ապահովելու համար: Բնակավայրի առանձին փողոցներում լուսարձակների բացակայության պատճառով խիստ դժվարացել է համայնքի բնակչության գիշերային ժամերի տեղաշարժը: Եղել են դեպքեր երբ համայնքի բնակիչները գիշերային ժամերին ենթարկվել է թափառող շների հարձակումներին:

## ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է գիշերային լուսավորության ցանցի ընդլայնման շնորհիվ ապահովել համայնքի բնակչության գիշերային ժամերի անվտանգ տեղաշարժն ու երթևեկությունը:

## ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցի ընդլայնման տեխնիկական հնարավորությունները և կազմել լուսարձակների տեղաբաշխման սխեմա:
- Պատվիրել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր և ապահովել համապատասխան տեխնիկական պայմաններ:
- <<Հայաստանի էլեկտրացանցեր>> ընկերության հետ սահմանված կարգով կնքել պայմանագիր՝ լուսավորության ցանցի էլ սնուցման թույլտվություն և տեխնիկական պայմաններ ստանալու համար:
- Գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով հայտարարել մրցույթ և ընտրե համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցը կառուցող շինարարակա կազմակերպությունը:
- Ըստ նախնական հաշվարկների բնակավայրի թիվ թվով 1, 2, 3, 4, 5 և 6 փողոցներու տեղադրել թվով 100 լուսարձակներ:
- Ըստ ամենայնի աջակցել լուսավորության ցանցի կառուցման շինարարակա աշխատանքներին:
- Ապահովել ցանցի շահագործումն ու անխափան աշխատանքը:
- Ցանցի շահագործման ու սպասարկման հետ կապված ծախսերն իրականացնե համայնքի բյուջեի միջոցներով:

## ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիշերային լուսավորության ցանցի կառուցմամբ կապահովվի համայնքի բնակչությ
գիշերային ժամերի անվտանգ տեղաշարժն ու երթևեկությունը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների գիշերային լուսավորության ցանցի կառուցման և թվ 100 լուսարձակների տեղադրման համար կպահանջվի 2.5 մլն. դրամի ներդրում: Ծրագիր իրականացել համայնքի բյուջեի միջոցներով:

Որպես լուսարձակների հենասյուներ օգտագործել համայնքի սեփականությու հանդիսացող և չօգտագործվող Դ 150 մմ տրամաչափի 200 գծ.մ երկարության մետաղ խողովակաշարը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրն իրականացնել 201§թ. մայիս-օգոստոս ամիսներին:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Ղարիբջանյանի համայնքի ղեկավար՝ Մանվել Պողոսյան:

ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ՝ համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

## <u>Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 6</u>

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

*ՀՀ Շիրակի մարզի Ղարիբջանյանի համայնքի ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների փոսային նորոգում:*

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ղարիբջանյանի համայնքի ներամայնքային և դաշտամիջյան ճանապարհները գտնվում ե՛ քայքայված և անբարեկարգ վիճակում, առանձին տեղամասեր անանցանելի ե՛ հետիոտների, տրանսպորտային միջոցների և գյուղատնտեսական տեծնիկայի համար:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է գուղատնտեսական աշխատանքների իրականացման համար ինչպես նաև համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար ապահովե բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ:

Երթևեկելի դարձնել համայնքի քայքայված և անանցանելի փողոց գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար բեռնատարներ գյուղատնտեսական մեքենաների համար ապահովել անվտանգ երթևեկություն, կա վթարային իրավիճակները և բերքի հնարավոր կորուստները:

Անհրաժեշտ է իրականացնել վերանորոգվող ներհամայնքային ճանապարհն շրջակայքերի սանիտարական մաքրման, շինարարական և կենցաղային ա տեղափոխման աշխատանքներ:

Սանիտարական մաքրման է ենթակա 10000 քառ. մ տարածք: Ըստ նախնակ հաշվարկների անհրաժեշտ է մաքրել և տեղափոխել մոտ 10 խ.մ. շինարարակա կենցաղային աղբ:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ծրարի իրականացման աշխատանքները կազմակերպելու համար ստեղ աշխատանքային խումբ:
- Ուսումնասիրել նորոգման ենթակա ներհամայնքային ճանապարհների տեխնիկակ վիճակը, ճշտել նորոգման ծավալները, կազմել թերությունների ակտ աշխատանքների իրականացման ժամանակացույց :
- Ճանապարհների նորոգումը կատարել խճապատման, մանրախտիկ ավա ծածկույթի իրականացման միջոցով:
- Ճանապարհների նորոգման, շրջակայքերի սանիտարական մաքրմա աշխատանքներին ներգրավել համայնքում առկա տրանսպորտային, տեխնիկակա միջոցներն ու համայնքի բնակչությանը:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար կապահովվի բարեկար և հարմարավետ ճանապարհներ: Երթևեկելի կդառնան համայնքի դաշտամիջյա ճանապարհահատվածները:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

| Հ/հ | Աշխատանքների | Չափի | Քանակը | Միավորի | Ընդհանուր | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|

| | նկարագրություն, նյութերի անվանումը, | միավոր | | արժեքը /դրամ/ | արժեքը /դրամ/ | |
|---|---|---|---|---|---|---|
| | *Տեխնիկական միջոցների շահագործում* | | | | | |
| 1 | Էքսկավատորի շահագործում /հարթեցման աշխատանքներ/ | ժամ | 200 | 2000 | 400000 | |
| 2 | Բարձիչ մեխանիզմով բարձման ախատանքների իրականացում՝<br>-հանքակոպիճի բարձում՝ 150խ.մ.<br>-ավազի բարձում՝ 110խ.մ.<br>-շինարարական և կենցաղային աղբի բարձում՝ 20խ.մ. | Խոր.մ | 250 | 1200 | 300000 | |
| 3 | Ինքնաթափի միջոցով հանքակոպիճի, ավազի և աղբի տեղափոխում | Խոր.մ | 250 | 1000 | 250000 | |
| | *Ընդամենը՝ Տեխնիկական միջոցների շահագործում* | X | X | X | 950000 | |
| | *Աշխատանք* | | | | | |
| 1. | Ճանապարհների շրջակայքերի սանիտարական մաքրում | Քառ.մ | 20000 | X | X | Համայնքի անդամներ |
| | *Ընդամենը աշխատանք* | X | X | X | X | |
| | *Նյութեր* | | | | | |
| 1 | Հանքակոպիճ | Խոր.մ | 100 | X | X | Համայնքի ներդրում |
| 2 | Ավազ | Խոր.մ | 80 | X | X | Համայնքի ներդրում |
| 3 | Դիզելային վառելանյութ | լիտր | 2000 | 450 | 900000 | |
| | *Ընդամենը նյութեր* | | | | *900000* | |
| | *Ընդամենը ծախսեր* | | | | *1850000* | |

Ծրագրի իրականացման համար կպահանջվի 1850 հազ. դրամի ներդրում,

Ծրագիրն իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

Ծրագրով նախատեսված օժանդակ աշխատանքների կատարումն իրականացնել համայնք բնակչության ուժերով:

## ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրն իրականացնել 2018 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին:

## ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Ղարիբջանյանի համայնքի ղեկավար՝ Մանվել Պողոսյան:

ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ՝

համայնքի ավագանու անդամներ, գյուղապետարանի աշխատակազմ, համայն բնակիչներ:

## 5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| N | Ցուցանիշի անվանումը | Չափի միավոր | 2016թ. փաստացի | 2017թ. կանխատեսում | 2018թ. կանխատեսում | 2019թ. կանխատեսում | 201[illegible] կանխատեսում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | Համայնքի տարածքը | հա | 1022 | | | | |
| 2 | Բնակչության թիվը | մարդ | 1056 | | | | |
| 3 | Տն. տնտեսությունների թիվը | ընտ. | 296 | | | | |
| 4 | Ծնունդը | | | | | | |
| 5 | Մահացությունը | մարդ | 5 | | | | |
| 6 | Աշխատունակ բնակչություն | մարդ | 500 | | | | |
| 7 | Զբաղվածները ընդամենը այդ թվում ըստ տնտեսության ճյուղերի՝ | մարդ | 500 | | | | |
| | ա/ գյուղատնտեսություն /թերի բեռնվածությամբ/ | մարդ | 400 | | | | |
| | բ/արդյունաբերություն | մարդ | | | | | |
| | գ/շինարարություն | մարդ | 60 | | | | |
| | բ/ ծառայությունների ոլորտ. | մարդ | 20 | | | | |
| | դ/այլ ոլուտներ | մարդ | 20 | | | | |
| 8 | Գործազրկության մակարդակը | % | | | | | |
| 9 | Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը | հատ | 1 | | | | |
| 10 | Համայնքային սեփականության վարելահողեր | հա | 432 | | | | |
| 11 | Պահուստային հողերի օգտագործման մակարդակը | % | 80 | | | | |
| 12 | Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկայությունը | կմ | | | | | |
| 13 | Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը | կմ | | | | | |
| 14 | Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր | հա | | | | | |
| 15 | Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը | կմ | | | | | |
| 16 | Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը | կմ | | | | | |
| 17 | Ընդամենը բնակ -ֆոնդ այդ թվում՝ | հատ/ք.մ | | | | | |
| | -Համայնքային | հատ | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ք.մ | | | | | |
| | -Մասնավոր բնակ. ֆոնդ | հատ ք.մ | | | | | |
| 18 | Բնակարանի կարիքավոր ընտանիքերի թիվը | հատ | | | | | |
| 19 | Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը | լիտր/ օր | | | | | |
| 20 | Ջրի կորուստները ցանցում | % | | | | | |
| 21 | Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում | մարդ | 98 | | | | |
| 22 | Երեխաների թիվը մանկապարտեզում | մարդ | 25 | | | | |
| 23 | Գյուղապետարանի և ենթակառուցվածքների աշխատողների թիվը | մարդ | 10 | | | | |